



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 18 » հոկտեմբերի 2019թ.

№ 683 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 342-Լ  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 6-ի «Մաքսային գործառնությունների իրականացման վայրերը սահմանելու մասին» N 342-Լ հրամանի 2.1-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.1. ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող ավտոտրանսպորտային միջոցները (բացառությամբ նշված դիրքին դասվող այն ավտոտրանսպորտային միջոցների, որոնք ՀՀ սահմանը հատում են բեռնարկղերով կամ ավտոկրող տրեյլերներով), «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հոգուտ




պետության» մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, ինչպես նաև վերոնշյալ ապրանքային դիրքին դասվող (բացառությամբ նշված դիրքին դասվող այն տրանսպորտային միջոցների, որոնք ՀՀ սահմանը հատում են բեռնարկղերով կամ ավտոկրող տրեյլերներով) և ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում, իսկ ՀՀ սահմանի հայ-իրանական հատվածով մաքսային տարածք ժամանման դեպքում Հարավային մաքսատուն-վարչությունում կամ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում՝ անձի ցանկությամբ:»

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 21-ից:



Recoverable Signature

X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ